No Kid Left Indoors

Բյուջե

Նպատակը

36 կյանքի դժվար իրավիճակներում հայտնված երեխաների ուղարկել Արագած ճամբար՝ երկու անմոռանալի շաբաթ անցկացնելու համար:

Նկարագրություն

Երեխաների մեծ մասի համար ամառային ճամբարը դասերի ավարտը տոնելու, արկածների և նոր ընկերներ ձեռք բերելու ժամանակ է՝ կախարդական և հիշարժան փորձառություն:

Երեխաների համար, ովքեր դժվարությունների միջով են անցել (օրինակ՝ պատերազմի ժամանակ ծնողի կորուստը), ճամբարն ավելի մեծ նշանակություն ունի: Այն հնարավորություն կտա հոգեպես վերականգնվելու:

Ամեն տարի Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ) հովանավորում է իր՝ «Հայաստանի երեխաների հովանավորման» ծրագրի (ՀԵՀԾ) 150-ից ավելի երեխաների գեղեցիկ երկշաբաթյա ճամբարային փորձառությունը: Մասնակիցները հիմնականում տարբեր դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքներից են: Մեծ մասը սոցիալապես անապահով են: Ոմանք սիրիահայ փախստականների երեխաներ են, մյուսները՝ 2020 թվականի Ադրբեջանի հետ պատերազմում զոհված զինվորների երեխաներ:

Ճամբարի ընթացքում երեխաները ձեռք են բերում ընկերներ ողջ կյանքի համար: Նրանք սովորում և զարգացնում են նոր հմտություններ, տեսարժան վայրեր այցելում և մասնակցում են զվարճալի և հետաքրքիր միջոցառումների: Նրանք ֆիզիկապես ակտիվ են, սնվում են կանոնավոր ու սննդարար:

Սահմանափակ ֆինանսական միջոցների պատճառով ՀՕՖ-ը, ցավոք, չի կարող բոլոր երեխաներին ճամբար ուղարկել: Մենք «Այո»-ի թիմով ցանկանում ենք բավականաչափ գումար հավաքել, որ 2020 թվականի պատերազմում հորը կորցրած առնվազն 36 երեխայի ճամբարին մասնակցելու հնարավորություն տանք: Մեզ անհրաժեշտ է ընդամենը 275 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր երեխայի՝ 16 օր ճամբարում անցկացնելու համար:

Որքան շատ գումար հավաքենք, այնքան շատ երեխաների կկարողանանք մասնակից դարձնել: Ուզու՞մ եք նրանց տալ անմոռանալի փորձառություն:

FAR

Բյուջե

Ծախսի առարկա	Երեխաների թիվ	Մեկ երեխայի ծախս	Ընդամենը ՀՀ դրամ
Երեխա	36	֏100,800	֏3,628,800

Ընդհանուր

Փոխարժեք՝ *1* ԱՄՆ դոլար = *365 ՀՀ* դրամ

֏3,628,800